

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱԼԻՆՅԱՆ ԱՆՆԱ ԱՇՈՏԻ

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ)**

**Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ պետական կառավարման
ակադեմիայում**

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Խաչատուրի Մարկոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Համբարձումի Օրոյան
	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հռիփսիմե Գալուստի Մանուկյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

**Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հունիսի 15-ին ժամը 15⁰⁰-ին
Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ
015 մասնագիտական խորհրդի նիստում:**

Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:

**Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:**

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի մայիսի 15-ին:

**015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Ա.Հ.Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից համաշխարհային տնտեսության և քաղաքականության մեջ ակներև է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (այսուհետ՝ ՉԺՀ) աճող դերը, ինչն էլ մեծ հետաքրքրություն է առաջացնում այդ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական համակարգի և, հատկապես, տնտեսության պետական կառավարման նկատմամբ:

Չինաստանն արևելյան աշխարհի հզորագույն գերտերություններից մեկն է, որի արժեքային հենքը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգն արմատապես տարբերվում են արևմտյանից: ՉԺՀ տնտեսության պետական կառավարման համակարգը յուրահատուկ է աշխարհում, և այդ պատճառով էլ արդիական է դառնում այդ համակարգի ուսումնասիրությունն ու առավելությունների վերհանումը:

Երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական կուրսի և կառավարման ոլորտում հեռանկարային գործողությունների, յուրաքանչյուր «պետական քայլի» մեջ «ինքնաբավության» սկզբունքի պարտադիր առկայությունն էլ հենց նրա վերընթաց զարգացման և կայունության անբաժանելի մասն է:

Նախկինում ձևավորված պետական ապարատի կազմալուծմանը հանգեցրած «մշակութային հեղափոխությունից» հետո ՉԺՀ-ում դրվեց միասնական սկզբունքով պետական իշխանության մարմինների համակարգի վերստեղծման խնդիրը: Դրա հետ մեկտեղ հատուկ արդիականություն ձեռք բերեց պետական մարմինների «ներդաշնակ» աշխատանքի ապահովման խնդիրը:

ՉԺՀ-ի պետական կառավարման մարմինների ժամանակակից համակարգի նկատմամբ ներկայացվող կարևորագույն պահանջն իշխանության կայունության ապահովումն է, անցյալում ձևավորված պետական կառուցվածքի կազմալուծմանը հանգեցրած պատճառների անթույլատրելիությունը:

Չինաստանում XX դարի 70-ականների վերջում տնտեսական և քաղաքական ինտեգրման ուժեղացմանը, Չինաստանի բուռն սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգահեռ ընթացող պետական կառավարման համակարգի ձևավորումը հանգեցրեց վարչական համակարգի ինստիտուցիոնալ փոփոխությունների:

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև ՉԺՀ-ի տնտեսության պետական կառավարման ինստիտուցիոնալ համակարգում արևմուտքին հատուկ նոր պետական կառավարման տարրերի ներառման հնարավորության ուսումնասիրությամբ:

Արևելյան մշակույթն առանձնանում է ավանդույթների կայունությամբ և պատմության առանձնահատկությամբ, մտածելակերպի առավել արտահայտված ազգային յուրահատուկ գծերով, իսկ տնտեսության պետական կառավարման համակարգի ուսումնասիրությունն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն այդ պետությունների հետ հաջող համագործակցության համար:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության պետական, և առանձնապես տնտեսության պետական կառավարման համակարգում իրականացվող զարգացումների և դրանց առանձնահատկությունների, հետխորհրդային երկրներում պատմական և նորովի զարգացումների, համաշխարհային ինտեգրման գործընթացների առանձնահատկությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Ատենախոսության թեման կարևոր է նաև տնտեսության պետական կառավարման տարրերի «ընտրովի ներմուծման» լոգունգով ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի մշտական անդամ Չինաստանի բարեփոխումների անավարտության փաստով՝ այս պետության հետ փոխշահավետ համագործակցության ապահովման նպատակով ՉԺՀ-ի պետականաշինության առանձնահատկությունների ուսումնասիրման համատեքստում:

Բարեփոխումների արևմտյան փորձը սեփական ինստիտուցիոնալ միջավայրին հարմարեցնող Չինաստանի ռազմավարությունը հետաքրքրական է նաև նրանով, որ ինչպես Չինաստանում, այնպես էլ հետխորհրդային մյուս երկրներում և Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումները դեռևս ավարտված չեն (իսկ դրանք երբեք էլ չեն «ավարտվում», քանի որ շարունակական են), իսկ միջանկյալ արդյունքները դեռևս չեն արդարացնում բարեփոխիչների ակնկալիքները:

Հայաստանի Հանրապետության համար խիստ արդիական է նաև պետության կառավարման և, հատկապես, տնտեսության պետական կառավարման միջազգային առաջավոր և Չինաստանի նման ավանդույթներ ունեցող երկրի փորձի ուսումնասիրությունը, քանի որ երկու ժողովուրդներն էլ կրում են համաշխարհային քաղաքակրթության բազմադարյան արժեքները:

Շտապագոտության նպատակը և խնդիրները: Ուսումնասիրության նպատակը ՉԺՀ և ՀՀ տնտեսությունների պետական կառավարման համակարգերն ու դրանց ձևավորման, պետական իշխանության մարմինների կառուցվածքի, գործունեության կազմակերպման և գործառույթների, տնտեսական և քաղաքական համակարգերի վերլուծությունն ու բնութագրումն է, և դրանց հիման վրա ՀՀ տնտեսության պետական կառավարման համակարգի արդիականացման առաջարկությունների մշակումը:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում կարևորվել է հետևյալ խնդիրների լուծումը՝

- դիտարկել ՉԺՀ-ում «ժողովրդավարություն» և «ժողովրդական կառավարում» հասկացությունների արտահայտչաձևերը,
- վերլուծել Չինաստանի պետական կառավարման մշակույթը և կառավարչական գործելակերպը, բացահայտել դրանց առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ՉԺՀ-ում պետական կառավարման ժամանակակից մոտեցումները և դրանց՝ ազգային շահերին ներդաշնակությունը,
- ուսումնասիրել ՉԺՀ-ում և ՀՀ-ում իշխանության թևերի տարանջատման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները,

- վերլուծել ՉԺՀ և ՀՀ պետական կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ զարգացման և բարեփոխումների հիմնական փուլերը,
- ուսումնասիրել ՉԺՀ-ում և ՀՀ-ում տնտեսությունների պետական կառավարման համակարգերը, վերհանել դրանց առանձնահատկությունները,
- բացահայտել ՉԺՀ-ում պետական ծառայության և ՀՀ-ում քաղաքացիական ծառայության համակարգերի առանձնահատկությունները,
- դիտարկել ՉԺՀ և ՀՀ տնտեսությունների պետական կառավարման սահմանադրական սկզբունքներն ու առանձնահատկությունները,
- վերլուծել ՉԺՀ և ՀՀ տնտեսական զարգացման պարադիգմաները,
- վերլուծել ՉԺՀ-ում և ՀՀ-ում ընդունված սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերը, հայեցակարգերը, ուսումնասիրել դրանցում ամրագրված նպատակները,
- համեմատական վերլուծություն իրականացնել ՉԺՀ-ում և ՀՀ-ում ընդունված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ու հայեցակարգերի միջև:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՉԺՀ և ՀՀ տնտեսությունների պետական կառավարման համակարգերն են, իսկ առարկան՝ այդ երկրների տնտեսությունների պետական կառավարման համակարգի ձևավորման ընթացքն ու ինստիտուցիոնալ միջավայրը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՉԺՀ և ՀՀ տնտեսությունների պետական կառավարման համակարգի մասնագետների, տարբեր երկրների գիտնականների աշխատություններում արտացոլված գիտական տեսությունների հայեցակարգային դրույթները: Օգտագործվել են գիտական և պատմական տեղեկություններ, պաշտոնական փաստաթղթեր: Կիրառվել են ուսումնասիրության համալիր-համակարգային մոտեցում, համեմատական վերլուծության մեթոդներ, փորձագիտական գնահատականներ:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՉԺՀ-ի և ՀՀ-ի իրավական ակտերը, Սահանադրությունները, օրենքները, կանոնակարգերը, ՉԺՀ Կոմունիստական Կուսակցության (ՉԿԿ) փաստաթղթերը, ՉԺՀ ծրագրային փաստաթղթերը՝ հնգամյա պլանները, ռազմավարական ծրագրերը, այլ բնույթի ծրագրերը, արտասահմանյան երկրների բարեփոխումների ծրագրային փաստաթղթերը, ինչպես նաև գիտական աշխատություններ, զեկույցներ, քաղաքական և հասարակական գործիչների հաշվետվություններ, ելույթներ, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, ինչպես նաև ՀՀ պաշտոնական վիճակագրական նյութերը, տեղեկատվական գործակալությունների և զանգվածային տեղեկատվության միջոցների նյութերը, ՉԺՀ կառավարման մարմինների պաշտոնական, չինական ՉԼՄ-ների և այլ մարմինների հրապարակումները: Տեղեկատվական հիմք են հանդիսացել նաև ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումներն ու այլ իրավական ակտերը, Չինաստանի

Կոմունիստական կուսակցության, Չինաստանի Պետական Խորհրդի, Պետխորհրդի առանձին գերատեսչությունների, չինական և միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքերի կողմից ներկայացված էլեկտրոնային ռեսուրսները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: ՉԺՀ և ՀՀ-ի տնտեսության պետական կառավարման համակարգերի հետազոտության որոշ արդյունքներ հավակնում են գիտական նորույթի: Դրանք են՝

1. բացահայտվել և համակարգվել են Չինաստանի տնտեսության պետական կառավարման հատկանշական մի շարք սկզբունքներ, որոնք կիրառելի են ինչպես ՀՀ, այնպես էլ այլ երկրների կառավարման համակարգերում,

2. բացահայտվել և համեմատական վերլուծության են ենթարկվել երկու երկրների տնտեսությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգերի ձևավորման ու զարգացման մշակութային և ինստիտուցիոնալ միջավայրերի դերն ու առանձնահատկությունները,

3. բացահայտվել և մատնանշվել են տնտեսության պետական կառավարման չինական մոդելն արևմտյան երկրների մոդելից տարբերող հիմնական առանձնահատկությունները,

4. բացահայտվել են ՉԺՀ-ի և ՀՀ-ի տնտեսությունների պետական կառավարման ուժեղ և թույլ կողմերը, այդ բնագավառում առկա թերություններն ու բացթողումները և մշակվել են նորովի մոտեցումներ ՀՀ-ի տնտեսության պետական կառավարման բարելավման համար,

5. ՉԺՀ-ի և ՀՀ-ի տնտեսությունների պետական կառավարման համակարգերի և դրանց արդիականացման համալիր և համակարգային վերլուծության օրինակով առաջարկվել է տնտեսության պետական կառավարման համակարգի մասին հետազոտությունների նոր մեթոդ և մոտեցում:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը և օգտագործումը: Աշխատանքի տեսական նշանակությունն որոշվում է նրա արդիականությամբ, գիտական նորույթով և կատարված եզրակացություններով: Աշխատանքում ներառված մի շարք դրույթներ և եզրակացություններ կարող են օգտագործվել ժամանակակից պայմաններում տարածաշրջանի երկրների տնտեսությունների պետական կառավարման համակարգի, մասնավորապես՝ դրանց զարգացման միտումների իմաստավորման համար:

Աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել պետական իշխանության տարբեր մարմինների, կուսակցությունների, ՉԺՀ պետական կառույցների և կազմակերպությունների հետ աշխատող ՀՀ պետական, առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների համար, օգտագործվել ուսումնական դասընթացների ժամանակ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված 6 (վեց) գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 179 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորոյթը, դրանց գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Զինաստանի Ժողովրդական Հանրապետության պետական կառավարման իմացաբանական հիմքերը» գլխում ուսումնասիրվել են ՉԺՀ-ում «Ժողովրդավարություն» և «Ժողովրդական կառավարում» հասկացության արտահայտչաձևերը, պետական կառավարման համատեքստում Զինաստանի մշակութային միջավայրն ու կառավարչական գործելակերպին վերաբերող խնդիրները, ինչպես նաև պետական կառավարման ժամանակակից մոտեցումներն ու այդպիսի մոտեցումների ներդաշնակության խնդիրները երկրի ազգային շահերին:

Ժամանակակից Զինաստանի տնտեսության պետական կառավարման մոդելի հիմնական առանձնահատկությունները, որոնք ընդունում է միջազգային գիտական հանրությունը, հետևյալն են¹

➤ պետության զբաղեցրած տեղի ու դերի կարևորումը և սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքային գծերի բացահայտումը, ինչը պայմանավորված է և՛ երկրի բնակչության թվաքանակով, և՛ տնտեսական արդյունքներով, և՛ պետական կառավարման կազմակերպման գործում սոցիալիստական ու կուսակցական գաղափարախոսության խոչընդոտ չհանդիսանալու գործոնով,

➤ պետական կառավարման ողջ շղթայի իրականացման ընթացքում մշտապես առկա չինական մտածողության առանձնահատկությունների առկայությունը, մասնավորապես՝ կոնֆուցիոսականության, դաոիզմի և բուդդայականության կրոնա-փիլիսոփայական էթիկայի պահպանումն ու իրավական մշակույթին հատուկ՝ բարոյական ավանդական նորմերի գերակայությունն իրավունքի նորմերի նկատմամբ,

➤ 20-րդ դարի միջին հատվածում (այսինքն՝ Զինական կայսրության անկման, ճապոնական օկուպացիայի և քաղաքացիական պատերազմի ավարտից հետո իրական անկախության ձեռք բերման պահից) Զինաստանի կողմից պատմական քաղաքական կուրսի ընտրությունը:

¹ Швердяев С.Н. Организация государственной власти в Китае// Организация государственной власти в России и зарубежных странах. Учебно-методический комплекс / Рук.авт. кол. и отв. ред. проф. Авакьян С.А.- М.: Юстицинформ, 2014. с. 487-514.

XIX դարում «ժողովրդավարություն» բառը չիներեն բացատրվում էր նաև որպես «շատ մարդկանց կողմից պետության կառավարում»² (众人的国统): «ժողովրդական կառավարում» (հետագայում՝ «ժողովրդավարություն») նոր նշանակությամբ **մինչժու (民主)** եզրույթը Չինաստանում սկսեցին օգտագործել XIX դարի 60-70-ականներին՝ որպես «ժողովուրդ-տեր»³ (人民作主), այսինքն պետություն, որտեղ իշխում է ժողովուրդը:

XIX դարի երկրորդ կեսին, Չինաստանի քաղաքական թուլության ժամանակահատվածում, ձևավորվեց ժողովրդավարության հայեցակարգը և առաջին անգամ առաջ քաշվեց «ինքնուժեղացման» կարգախոսը⁴ (自强) և համապատասխան քաղաքականությունը: XIX դարի 80-ականներից «ինքնուժեղացման» քաղաքականությունը ենթարկվեց էական փոփոխությունների, սկսեցին հիմնադրվել ոչ միայն ռազմական, այլ նաև քաղաքացիական նշանակության պետական կազմակերպություններ, որոնց թույլատրվում էր մասնակցել նաև ազգային կապիտալի ձևավորմանը, չնայած, որ այդ ժամանակաշրջանում դեռ պետությունը մասնավոր կազմակերպություններին դիտարկում էր որպես հասարակական կարգի պոտենցիալ սպառնալիք:

«Ինքնուժեղացման» քաղաքականությունը չապահովեց Չինաստանի զարգացման խնդիրների լուծումը, ինչը և հանգեցրեց նոր գաղափարի, իսկ կողմնակիցները չինական պատմագիտության մեջ անվանվեցին «բարեփոխումների վաղ կողմնակիցներ»՝ վաղ բարեփոխիչներ⁵ (早期改良派): Նրանք հանդես եկան կրթության, մշակույթի, տնտեսության տարբեր ոլորտներում և քաղաքականության ոլորտում առավել խոր բարեփոխումների ծրագրով, առաջարկելով հիմնովին փոփոխել երկրի հասարակական կարգի հիմքերը և տնտեսության պետական կառավարման մեջ ներմուծել արտասահմանյան փորձը: Վաղ բարեփոխիչների հիմնական առանձնահատկությունը եղել է քաղաքական ծրագրի առկայությունը, սոցիալական փոփոխությունների ոչ բռնի, այլ էվոլյուցիոն մեթոդների պաշտպանությունը և հեղափոխության անթույլատրելիությունը: Այդ կապակցությամբ նրանց անվանում էին նաև «քաղաքական բարեփոխումների կողմնակիցներ»:

² Medhurst W.H. English and Chinese Dictionary. Shanghai, 1847; Xiong Yuezhi. 'Liberty', 'Democracy', 'President': The Translation and Usage of Some Political Terms in Late Qing China. In: Lackner M., Amelung I. and Kurtz J. (eds.) New Terms for New Ideas: Western Knowledge and Lexical Change in Late Imperial China. Leiden: Brill, 2001.,

³ Chen Sheng Bao. Chinese Borrowings from the Japanese Language. The Japan Foundation Newsletter, Vol. XV/ Nos. 5-6, May 1988; Սյուն Յուէչժի 熊月之. Չժունգո ցզինդայի մինչժու սիյայան շի: Սյուդին բէն: 中国近代民主思想史 (Նոր ժամանակների չինական ժողովրդավարական մտքի պատմություն: Խմբ. հրատարակում). Շանհայ, 2002; Խանյուի վահլաիցի ցիդյան 汉语外来词词典 (Չինական լեզվի արտասահմանյան բառերի բառարան). Շանհայ, 1984; Չէն Շէնբաօ 陳生保. Տյուգոկուգօ-նօ նակա-նօ նիխոնգօ 中国語の中の日本語 (Ճապոնական լեզուն չինական լեզվում) Շանհայ, 1996

⁴ Յզէն Գօֆան (1811-1872), Լի Խունչժան (1823-1901), Չժան Չժիդուն (1837-1909), Ֆէն Գույֆէն (1809-1874) և այլն:

⁵ Օրինակ, Անգիայում և Ֆրանսիայում առաջին չինացի դեսպան Գո Սունատոն (1818-1891), հրապարակախոս Վան Տաոն (1828-1897), ձեռնարկատեր և քաղաքական գործիչ Չժէն Գուանինը (1842-1922), տեսաբան Չէն Չին (1855-1900), հրապարակախոս Յան Ֆուն (1854-1921), դիվանագետներ Սուն Յույժէնը (1857-1931), Խուան Յզունսյանը (1848-1905), Սյուէ Ֆուչէնը (1838-1894), Հոնկոնգյան հրապարակախոսներ Խէ Յին (1859-1914) և Խու Լիոյանը (1847-1916) և այլն:

XIX դարի չինացի բարեփոխիչները ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման իմաստը տեսնում էին պետական կառավարման մեջ «լավագույն» առաջարկությունների կիրառման նպատակով ժողովրդի ստեղծագործական ներուժի զարթոնքի, համընդհանուր ազգային նպատակներին հասնելու համար ժողովրդի միասնության ամրապնդման մեջ, իսկ «պառլամենտը» (*իյուանը՝ 议院*) դիտարկում էին որպես հաստատություն, որտեղ «քննարկվում են պետական կառավարման գործերը և մտավոր ուժերը միասնականորեն ուղղված են պետության ընդհանուր շահի իրացմանը»⁶:

Այսպիսով, ազգային գաղափարը, գաղափարախոսությունը չինական բարեփոխումների ռազմավարական տեսլականի կարևորագույն և, կարելի է ասել, Չինաստանի գոյության ողջ ընթացքի անբաժանելի բաղադրիչն է:

Որևէ երկրի պետական կառավարման մոդելի ներմուծում մեկ այլ երկիր, կամ ինչպես ներկայում ասվում է՝ այլ ինստիտուցիոնալ միջավայրում նոր ինստիտուտների ներմուծման ընթացքում, վերջիններիս բնույթը հիմնականում որոշվում է մշակութային միջավայրով, որն արտահայտում է ընդունող պետության ավանդույթները և արժեքները: Տնտեսության տարբեր ոլորտներում պետական կառավարման միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է նաև, որ հաճախ իշխանություններն անտեսում և չեն կարևորում մարդկանց համախմբող, ազգը մեկ բռունցք դարձնող գաղափարների ու համազգային ծրագրի իրականացման անհրաժեշտությունը: Միջդեռ, տնտեսական զարգացման հաջողությունը պայմանավորված է ազգի մշակույթում, արժեհամակարգում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու, առաջընթացի բարոյա-հոգեբանական միջավայր ձևավորող արժեքներ ստեղծելու պետության կարողությամբ⁷:

Առաքինության հիման վրա պետական կառավարումը Չինաստանի քաղաքական մշակույթ ներմուծվեց 2000-ականներից, և այդպիսի կառավարում ապահովելն ամրագրված է նաև ներկայում՝ ՉԺՀ պետական ծառայողների համար «չորս առաքինությունների» ստանդարտներում, որոնք ներառում են «բարոյականությունը և քաղաքական բարոյականությունը, մասնագիտական վարվելակարգը, ընտանեկան առաքինությունը»⁸:

⁶ Judge J. Key Words in the Late Qing Reform Discourse: Classical and Contemporary Sources of Authority. Indiana University, East Asian Working Paper Series on Language and Politics in Modern (Winter 1994), China.; Խե Յի և Խի Լիյուան ցզի 何居胡礼垣集 (Խե Յիի և Լի Յուանի հոդվածների ժողովածու)։ Շենյան, 1994., էջ. 406; Լյան Յիչաո 梁启超. Գու իյուան կաօցի 议院考 (Հին ժամանակների պառլամենտի մասին): 饮冰室文集点校 <1. Կունմին, 2004; Teng, Ssu-yü and Fairbank, J.K. (eds.) China's Response to the West: A Documentary Survey, 1839-1923. Cambridge, Mass.: Harvard University Press, 2001.

⁷ Վարդանյան Գ. Տնտեսական զարգացման մշակութային գործոնները. Առաջընթացի համընդհանուր արժեքներ: // «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» հանդես, 2016թ. N 1, էջ 9:

⁸ Программа построения гражданской морали Китая / Пер. В.М. Майорова. М., 2003; Սի Յզինպին. Պետական չինովնիկների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար, առաքինության 4 ստանդարտներ: [习近平“四德标准”为好干部立标杆] // ՉԺՀ ԿԿ նորություններ [中国共产党新闻网]. – 14.10.2013. – <http://cpc.people.com.cn/n/2013/1014/c241220-23195454.html>

Հեղինակը դիտարկում է չինական պետականության զարգացման ընթացքը, խոշորացված երեք փուլերը (առաջին՝ 221 մ.թ.ա. - 1870թ., երկրորդ՝ 1840-1978թթ., երրորդ՝ 1978թ.-ից առ այսօր) և վերլուծում յուրաքանչյուր փուլի հատկանիշները:

Ի տարբերություն ԱՄՆ-ի ինստիտուցիոնալ համակարգի, որն ուղղված է ֆինանսական օլիգարխիայի շահերի սպասարկմանը, ԱՄՆ դոլարի (որպես համաշխարհային արժույթի) պաշտպանությանը, Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Կորեայի, Վիետնամի, Մալայզիայի, Սինգապուրի, Իրանի և մի շարք այլ երկրների ինստիտուցիոնալ համակարգերը ձևավորում են զարգացման նոր կենտրոն, որը նպատակաուղղված է սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքում հանրային շահերի ապահովմանը: Այդ համակարգերը կենտրոնացած են տարբեր սոցիալական խմբերի շահերի ներդաշնակեցման, հավասարակշռման, գործարարների և պետության միջև գործընկերային հարաբերությունների ստեղծման միջոցով հանրության համար նշանակություն ունեցող նպատակների իրագործմանը:

Ներկայում տեղի է ունենում համաշխարհային տնտեսության կառուցվածքային վերափոխում, որը պայմանավորված է նանո-, կենսահինժեներային և տեղեկատվական-հաղորդակցության նոր տեխնոլոգիական մակարդակների ձեռքբերմամբ⁹:

Այդպիսի առաջընթաց զարգացում է տեղի ունենում Չինաստանում և Հարավ-Արևմտյան Ասիայի երկրներում: Վերջին երեք տասնամյակի ընթացքում Չինաստանը կարողացավ անցում կատարել համաշխարհային տնտեսության առաջատար երկրների շարքը, իսկ 2014թ.-ին աշխարհում առաջինն էր ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի և բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ցուցանիշների գծով: Վերջին երեք տասնամյակի ընթացքում Չինաստանի ՀՆԱ-ն աճել է 30 անգամ (ԱՄՆ դոլարի նկատմամբ յուանի ընթացիկ կուրսով 300 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 9 տրլն դոլարի), արդյունաբերական արտադրության ծավալները՝ 40-50 անգամ, արժույթային պահուստները՝ հարյուրավոր անգամներ: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով Չինաստանն ամենաաղքատ երկրների ցուցակի վերջին տեղերից տեղափոխվեց առաջատար 30 երկրների շարքը՝ համարվելով միջին եկամուտով երկիր:

Նշվում է, որ BRICS տարածաշրջանային տնտեսական միավորման ստեղծումից հետո ասիական երկրներում կապիտալի կուտակումը կատարվում է արագ տեմպերով՝ ապահովելով տնտեսական բարձր աճ, իսկ ամերիկյան երկրների աճի տեմպերը նվազում են: Այդպիսի միտումները շարունակվելու են նաև ապագայում (տե՛ս աղյուսակ 1-ը):

Սկսած 2005թ.-ից ՉԺՀ պաշտոնական զարգացման գիտական հայեցակարգի¹⁰ առանցքային գաղափարը տնտեսական աճի քանակական պարամետրերից հրաժարումն է: Խնդիր է դրվել մոդելը դարձնել ներդրումային և ռեսուրսախնայող՝ սոցիալական կողմնորոշվածությամբ: Նախանշվել է 2020 թվականին ստեղծել

⁹ Глазьев С.Ю. "Мирохозяйственные уклады в глобальном экономическом развитии". Журнал "Экономика и математические методы". 2016, том 52, N 2, с. 15.

¹⁰ Stu՝ Мозиас П. Идеология экономических реформ в Китае: основные этапы эволюции // МЭиМО. 2007, № 11. с. 67.

«քաղաքի և գյուղի միասնական ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ), ավարտին հասցնել «գյուղի նոր տեսակի» ստեղծումը, ձևավորել երկրի միասնական տնտեսական համալիրի տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածք»¹¹:

Աղյուսակ 1

Ամերիկյան, ասիական տարածաշրջաններում և Եվրամիության երկրներում կապիտալի կուտակման ցիկլերին համապատասխանող ՀՆԱ-ի համադրությունը¹²

Երկրները	1820թ.	1870թ.	1913թ.	1950թ.	1973թ.	2000թ.	2010թ.	2020թ.	2030թ.
Չինաստան	33.0	17.1	8.8	4.6	4.6	11.8	20.7	28.9	33.4
Հնդկաստան	16.1	12.2	7.5	4.2	3.1	5.2	8.0	12.2	18.6
Ռուսաստան	5.4	7.5	8.5	9.6	9.4	2.1	2.4	2.7	3.0
Բրազիլիա	0.4	0.6	0.7	1.7	2.5	2.7	2.6	3.6	5.1
Հյուսիսային երկրներ	29.7	46.9	57.9	60.5	60.1	57.0	47.6	39.5	33.1
ԱՄՆ	1.8	8.9	18.9	27.3	22.1	21.9	18.4	16.7	15.1
Եվրամիություն	23.3	32.0	35.8	27.1	27.1	21.5	18.1	15.7	13.1
Ճապոնիա	3.0	2.3	2.6	3.0	7.8	7.2	5.4	4.4	3.2

Ատենախոսության երկրորդ՝ «ՉԺՀ-ի և ՀՀ-ի տնտեսությունների պետական կառավարման համակարգերի կառուցվածքն ու հիմնական առանձնահատկությունները» գլխում վերլուծվել են ՉԺՀ-ում և ՀՀ-ում իշխանության թևերի տարանջատման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները, երկու երկրների պետական կառավարման համակարգերի ինստիտուցիոնալ զարգացման և բարեփոխումների հիմնական փուլերը, ուսումնասիրվել են ՉԺՀ և ՀՀ տնտեսությունների պետական կառավարման համակարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև վերլուծվել են ՉԺՀ-ում պետական ծառայության և ՀՀ-ում քաղաքացիական ծառայության համակարգերի առանձնահատկությունները:

Հեղինակի կողմից համեմատական հետազոտության անցկացման նպատակը ՀՀ և ՉԺՀ տնտեսությունների պետական կառավարման մոդելների համեմատելիության որոշումն է և «փոխապատվաստման» հնարավոր եղանակների վերհանումը: Սովորաբար, պետական կառավարման մոդելների և համակարգերի համեմատական վերլուծությունն իրականացվում է որոշակի հատկանիշներով (բնութագրիչ գծերով) նմանություն ունեցող երկրների համար, կամ ինչպես ասում են՝ համեմատելի երկրների համար:

Պետական կառավարման մոդելների համեմատական վերլուծության համար օգտագործվում է Համաշխարհային բանկի կողմից մշակված՝ պետություններում պետական կառավարման արդյունավետությունը գնահատող ինդեքսը (Governance

¹¹ Տես՝ Абалкин Л. Аграрная трагедия России // Вопросы экономики, 2009, № 9.

¹² Աղբյուրը՝ Глазьев С.Ю. "Мирохозяйственные уклады в глобальном экономическом развитии". Журнал "Экономика и математические методы". 2016, том 52, N 2, էջ 17. Перспективы и стратегические приоритеты восхождения БРИКС. Научный доклад к VII саммиту БРИКС. 2014:

Research Indicator Country Snapshot) (GRICS)¹³, Նշված հավաքական ինդեքսը բաղկացած է պետական կառավարման չափանիշներն արտահայտող 6 համաթվերից (ինդեքսներից): Դրանք են՝ (1) իշխանությունների հաշվետվողականությունը և բնակչության ձայնի իրավունքը, (2) քաղաքական կայունությունը և բռնության բացակայությունը, (3) կառավարության արդյունավետությունը, (4) կարգավորման որակը, (5) իրավունքի գերակայությունը և (6) կոռուպցիայի վերահսկողությունը: Նշված ցուցանիշներով հավաքական ինդեքսի գնահատման արդյունքում առավել բարձր արդյունք է ապահովում պետական կառավարման սկանդինավյան մոդելը¹⁴:

Հետազոտության արդյունքում կազմված աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ՝ Չինաստանում հանրային կառավարման ցուցանիշներից ամենացածրը «իշխանությունների հաշվետվողականությունը և բնակչության ձայնի իրավունքն» է, որը 2016թ.-ին 1996թ.-ի համեմատությամբ նվազել է 5.1 տոկոսային կետով:

Աղյուսակ 2

Հանրային կառավարման ցուցանիշների համաթվերը ՉԺՀ-ում և ՀՀ-ում 1996-2016 թվականներին (%-ով)¹⁵

Ցուցանիշը	Չինաստան				Հայաստան			
	1996	2006	2016	Փոփոխությունը՝ 2016թ. 1996թ.-ի նկատմամբ, %-ային կետ	1996	2006	2016	Փոփոխությունը՝ 2016թ. 1996թ.-ի նկատմամբ, %-ային կետ
Իշխանությունների հաշվետվողականություն և բնակչության ձայնի իրավունք	12.00	5.77	6.90	-5.10	33.1	26.4	30.5	-2.6
Քաղաքական կայունություն և բռնության բացակայություն	44.15	28.02	27.14	-17.01	33.1	26.44	30.54	-2.56
Կառավարության արդյունավետություն	43.17	57.07	67.79	24.62	41.53	46.34	49.52	7.99
Կարգավորման որակ	45.11	48.04	44.23	-0.88	44.02	58.82	62.98	18.96
Իրավունքի գերակայություն	33.67	31.1	46.15	12.48	37.69	35.41	50.48	12.79
Կոռուպցիայի վերահսկողություն	48.39	37.07	49.04	0.65	38.17	29.76	32.69	-5.48
Ընդամենը	226.5	207.1	241.2	14.7	227.6	223.2	256.7	29.1

Նույն ժամանակահատվածում՝ 17.01 տոկոսային կետով նվազել է նաև «քաղաքական կայունության և բռնության բացակայության» ցուցանիշը, ոչ էական չափով (0.88 տոկոսային կետով) նվազել է «կարգավորման որակ» ցուցանիշը, իսկ

¹³ http://info.worldbank.org/governance/wgi/sc_country.asp

¹⁴ <http://databank.worldbank.org/data/reports.aspx?source=world-development-indicators>.

¹⁵ Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է հեղինակի կողմից՝ Worldwide Governance Indicators, <http://info.worldbank.org/governance/wgi/#home> տվյալների բազայի հիման վրա:

մնացած ցուցանիշների գծով նկատվել է աճ: Ըստ բերված ցուցանիշների, Հայաստանում ամենամեծ անկումը (5.48 տոկոսային կետով) նկատվում է «կոռուպցիայի վերահսկողություն» ցուցանիշի գծով, «իշխանությունների հաշվետվողականություն և բնակչության ձայնի իրավունք» (2.6 տոկոսային կետով), ինչպես նաև «քաղաքական կայունություն և բռնության բացակայություն» (2.56 տոկոսային կետ) ցուցանիշների գծով:

Անգլոսաքսոնական երկրներում, հանրային կառավարման ոլորտում ավանդական է եղել իրավական մեխանիզմներով պետական կառավարման «կոշտ շրջանակների» սահմանումը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով համակարգի պատասխանատվությանը: Ռոմանագերմանական երկրների համար մշտապես կարևորվել է կառավարչական որոշումների ընդունմանը քաղաքացիական հասարակության կառույցների մասնակցության ապահովումը: Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային տարածքի երկրներում վարչահրամայական կառավարման պայմաններում տնտեսական և սոցիալական ոլորտներում առկա էր պետական կառավարման «ավելցուկ»:

Հեղինակի կողմից քննական-վերլուծական համեմատության միջոցով ուսումնասիրվել է ՉԺՀ և ՀՀ պետական իշխանության թևերի և դրանց մարմինների ձևավորումը, համակարգի կառուցվածքը, այդ մարմինների գործունեության իրավասություններն ու գործառույթները, ներկայացվել է տնտեսության պետական կառավարման համակարգերի՝ սահմանադրությամբ ամրագրված դրույթների համեմատականը¹⁶:

Ատենախոսության երրորդ՝ «ՉԺՀ-ի և ՀՀ-ի տնտեսությունների պետական կառավարման ինստիտուտների զարգացման միտումները» գլխում ներկայացվել են ատենախոսությունում կատարված հետևյալ հիմնախնդիրների վերլուծությանը՝ ՉԺՀ և ՀՀ տնտեսությունների պետական կառավարման սահմանադրական սկզբունքներն ու հիմնախնդիրները, ՉԺՀ և ՀՀ տնտեսական զարգացման պարադիգմաները, ՉԺՀ-ում և ՀՀ-ում ընդունված սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի նպատակները, երկու երկրներում ընդունված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի ու հայեցակարգերի համեմատականները և արդյունքների վերլուծությունը:

ՉԺՀ-ի արմատական խնդիրը չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի տեսության հիման վրա տնտեսության սոցիալիստական արդիականացման իրականացումն է (ՉԺՀ Սահմանադրություն, ներածություն): Երկրում առկա՝ պետական սեփականության վրա հիմնված տնտեսության հատվածը, կամ՝ համաժողովրդական սեփականության վրա հիմնված սոցիալիստական տնտեսությունը ժողովրդական տնտեսության մեջ առաջատար ուժն է:

¹⁶ Համեմատության առավել տեսանելիությունը և ակներևությունն ապահովելու նպատակով համեմատականն անցկացվել է կոնկրետ իրավիճակի, խնդրի լուծման մոտեցմամբ, կոնկրետ գործառույթների բնագավառներով:

Չինաստանի Նախագահ Սի Յզինպինի կողմից ձևակերպված՝ չինական առանձնահատկությամբ սոցիալիզմի զարգացման նոր դարաշրջանը ճանաչվել է «մարքսիստական տեսության չինայնացման նորագույն ձեռքբերում», և այդ գաղափարը տեղ կգտնի երկրի հիմնական օրենքում Մաո Յզեդունի գաղափարներին, Դեն Սյաոպինի տեսությանը, ինչպես նաև եռակի ներկայացուցչականության (Չինաստանի և չինական ժողովրդի արմատական շահերի, առաջավոր արտադրողական ուժերի զարգացման ու մշակույթի պաշտպանության մասին) սկզբունքին հավասար:

«Ն տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: ՀՀ-ում տնտեսության ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, բնակարանային շինարարության խթանումը, ծնելիության և բազմազավակության խթանումը, սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը, տարածքային համաչափ զարգացումը և այլն:

Հեղինակը նշում է, որ թե՛ ՉԺՀ-ում և թե՛ ՀՀ-ում տնտեսությունների պետական կառավարման սահմանադրական սկզբունքները բխում են այդ երկրների առջև կանգնած քաղաքական և սոցիալ-տնտեսական առաջնահերթությունների ու գերակա հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից, նպատակ ունենալով պահպանելու այդ երկրների քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի կայունությունը:

Չինաստանի սոցիալ-տնտեսական զարգացման արագ տեմպերին նպաստող հանգամանքներից և Չինական բարեփոխումների կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ միկրոմակարդակում խթանելով տնտեսավարման նախաձեռնությունները, իշխանությունը հետևողականորեն իրականացնում է մակրոհսկողությունը և, տնտեսության անհավասարակշռության աճի դեպքում, լրացուցիչ միջոցառումներ է իրականացնում տնտեսության կայունացման ուղղությամբ:

Չինաստանի տնտեսության դինամիզմն առաջին հերթին բնութագրվում է ՀՆԱ-ի աճի բարձր ցուցանիշներով: Այսպես, եթե 1990-2000թթ.-ի աշխարհի ՀՆԱ-ի տարեկան միջին աճը կազմել է 2.9%, ապա Չինաստանինը՝ 10.6%, Հայաստանինը՝ 1.9%, 2000-2016թթ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 2.8%, 9.9% և 6.0%: ՀՆԱ-ի նման բարձր տեմպերով աճը հանգեցրել է Չինաստանի ՀՆԱ-ի ծավալի զգալի ավելացմանը և այդ ցուցանիշով 2016թ.-ն Չինաստանը զբաղեցրել է աշխարհում երկրորդ տեղը (11199.1 մլրդ ԱՄՆ դոլար), հետ մնալով միայն ԱՄՆ-ից (18624.5 մլրդ ԱՄՆ դոլար): Ըստ որում, 2016թ.-ին 2005թ.-ի համեմատությամբ ՀՆԱ-ի

մեծությունն ավելացել է շուրջ հինգ անգամ՝ 2005թ.-ի 2286.0 մլրդ ԱՄՆ դոլարից 2016թ.-ին հասնելով 11191.1 մլրդ ԱՄՆ դոլարի: Այդ նույն ժամանակահատվածում Ճապոնիայում ՀՆԱ-ն ավելացել է ընդամենը 103.9%-ով՝ 2005թ.-ի 4755.4 մլրդ ԱՄՆ դոլարից 2016թ.-ին հասնելով 4940.2 մլրդ ԱՄՆ դոլարի: Հայաստանում ՀՆԱ-ի աճի տեմպն այդ նույն ժամանակահատվածում կազմել է 216.3%-ով, 2005թ.-ի 4.9 մլրդ ԱՄՆ դոլարից 2016թ.-ին այն հասել է 10.6 մլրդ ԱՄՆ դոլարի:

Չինաստանում արդյունաբերության տարեկան միջին աճը 1990-2000թթ.-ին կազմել է 13.7%, Հայաստանում՝ - 7.4%, 2000-2016թթ.-ին՝ Չինաստանում՝ 10.7%, իսկ Հայաստանում՝ 4.4%: Աշխարհի միջին ցուցանիշն այդ նույն ժամանակահատվածներում մնացել է անփոփոխ՝ կազմելով 2.9-ական %: ՀՆԱ-ի կառուցվածքում Չինաստանի արդյունաբերության բաժինն աշխարհում բարձրերից մեկն է: Եթե 2005թ.-ին աշխարհում այդ ցուցանիշը կազմել է 30%, ապա Չինաստանում՝ 47%, Հայաստանում՝ 45%: 2016թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 27.0%, 40.0% և 27.0%:

ԶԺՀ պահուստները, եթե 2005թ.-ին կազմել են 831.41 մլն ԱՄՆ դոլար, ապա 2016թ.-ին՝ 3097.658 մլն ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշվում է, որ այդ ցուցանիշներն ԱՄՆ-ի համար կազմել են համապատասխանաբար՝ 188.259 մլն ԱՄՆ դոլար և 405.942 մլն ԱՄՆ դոլար¹⁷:

Տնտեսական զարգացման նման ցուցանիշները հանգեցրեցին աղքատության մակարդակի էական կրճատմանը Արևելյան Ասիա և Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանում (1990թ.-ի 61.4%-ից այն 2013թ.-ին կազմել է 3.7%): Եթե աշխարհում այդ ցուցանիշի նվազումը նշված ժամանակահատվածում կազմել է 3.3 անգամ, ապա Արևելյան Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տարածաշրջանում՝ 16.6 անգամ:

Ատենախոսության մեջ կատարված հետազոտությունից հետևում է, որ ինչպես ԶԺՀ-ի, այնպես էլ ՀՀ-ի տնտեսական հեռանկարային զարգացման ծրագրերը (և՛ հնգամյա, և՛ սոցիալ-տնտեսական հորիզոնի ավելի լայն ընդգրկմամբ) կանխատեսվում են՝ ելնելով ինչպես երկրի զարգացման ներուժային հնարավորություններից, այնպես էլ երկրի առջև կանգնած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից, և հատկապես՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման պահանջներից:

2016-2020 թվականներին իրականացնելու համար Չինաստանի 13-րդ հնգամյա պլանի հիմնաքարը չինական տնտեսության զարգացման մոդելի փոփոխությունն է: Տվյալ ծրագրի հաջողությունն ուղղակիորեն կախված է Չինաստանում նախաձեռնված մեկ այլ քայլից՝ արդյունաբերության մեջ գիտա-տեխնիկական նվաճումների արդյունքների ներդրումից, ինչը թույլ կտա անցում կատարել Չինաստանում արտադրվող այլ երկրների ապրանքների էթանազին կրկնօրինակումից դեպի այնպիսի ապրանքների արտադրություն: Ծրագրի մեկ այլ հիմնադրույթն է՝ էթան աշխատուժի դարաշրջանի ավարտը, որպեսզի ձևավորվի զգալի միջին խավ: Իսկ որպեսզի

¹⁷ World Development Indicators. The World Bank. <http://wdi.worldbank.org/table/>

չինական ապրանքները պահպանեն իրենց մրցունակությունը համաշխարհային շուկայում, անհրաժեշտ է նվազագույն մակարդակի վրա պահպանել աշխատավարձի ֆոնդի մասնաբաժինն ապրանքների ինքնարժեքի կառուցվածքում:

ՉԺՀ-ի 13-րդ հնգամյա պլանի հիմնական նպատակներից է տնտեսական աճի որակի և արդյունավետության բարձրացումը, որը պայմանավորված է հետևյալ երեք բաղադրիչներով՝ նորարարություններով պայմանավորված աճի խթանմամբ, ներդրումների արդյունավետության բարձրացմամբ և սպառման որակի բարձրացմամբ: ՉԺՀ-ում նախաձեռնված փոփոխությունների 5 ուղղությունները (1. Չինաստանի զարգացմամբ պայմանավորված՝ համաշխարհային տնտեսության համար նոր հնարավորությունների բացումը, 2. Չինաստանի վերափոխումը ներդրումային տիպի պետության, 3. համաշխարհային «տնտեսական քարտեզի» վերագծումը, 4. Չինաստանի պատասխանատվության և պարտավորությունների ուժեղացումը միջազգային հարաբերություններում, 5. Չինաստանի կողմից գլոբալ կառավարման նոր հայեցակարգի առաջ քաշելը), ուղղակի ազդեցություն կունենան ողջ աշխարհի վրա:

ՉԺՀ-ի ժողովրդական տնտեսության և սոցիալական զարգացման 13-րդ հնգամյա (2016-2010թթ.) պլանը տնտեսության պետական կառավարման հիմնական գործիքն է, որը սահմանում է այդ ժամանակահատվածում զարգացման նպատակները, տնտեսության մակրո- համամասնությունները և դրանց հասնելու ուղիները:

ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը, որը նույնպես միջնաժամկետ է (նախատեսված է 6 տարվա համար), և մեր կողմից ՉԺՀ հնգամյա պլանի հետ դրա համեմատությունը, փաստաթղթի ռազմավարական նշանակությունը բացահայտելու իմաստով, կոռեկտ է: Ծրագրի իրականացմամբ 2017-2022 թվականների ընթացքում նպատակադրվում է՝

- զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի միջին հաշվով շուրջ 5 տոկոս աճի ապահովման միջոցով,
- արտահանման աճի նշանակալի տեմպերի ապահովում՝ ապրանքների և ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 40-45 տոկոսի,
- աղքատության կրճատման ապահովում՝ իջեցնելով այն 12 տոկոսային կետով,
- զբաղվածության աճի և արժանապատիվ աշխատանքի վարձատրության օպտիմալ զուգակցմամբ՝ անվանական նվազագույն աշխատավարձի 25 տոկոս աճի ապահովում՝ հաշվի առնելով կառուցվածքային գործազրկությունը և երկրի մրցունակության նվազման ռիսկերը զսպող նվազագույն աշխատավարձի և աշխատավարձի մեղիանայի համամասնությունը:

ՀՀ-ում ընդունված և ատենախոսության մեջ քննարկված ռազմավարական բնույթի ծրագրերի և հայեցակարգերի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա

փաստաթղթերը որոշակիորեն նախանշում են հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման ու կառավարման նպատակադրումները, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Միաժամանակ, թույլ է մշակված, կամ ընդհանրապես բացակայում է այդ փաստաթղթերի, ստանձնած առաջադրանքների միջև եղած կապ(եր)ը և հատկապես՝

➤ նշված չեն այն նյութական, ֆինանսական ու մարդկային ռեսուրսները և միջոցները, որոնք պետք է ապահովեն առաջադրված նպատակներին հասնելու ուղիները,

➤ դրանք չեն դետալացված տարիների և կատարողների կտրվածքով, ինչը նշանակում է, որ այդ փաստաթղթերն ունեն ինդիկատիվ բնույթ, քան պլանին բնորոշ կողմեր, որոնք բնութագրական են չինական հնգամյա պլաններին:

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ամփոփ արդյունքներն ու դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

1. Չինաստանում տնտեսական բարեփոխումների հաջողությունն ապահովող կարևորագույն գործոնը բարեփոխման օգտակարությունն յուրաքանչյուր չինացու անձամբ զգալն է, ինչը և նրան դարձնում է բարեփոխումների ակտիվ կողմնակից:

Պետական հատվածում ՉԺՀ-ի տարբեր ոլորտներում վարվող քաղաքականության հիմնական մոտեցումները պետական հատվածի՝ ազգային անվտանգության, բնական մենաշնորհներ հանդիսացող ծառայությունների, երկիրը հիմնական մթերքներով ու ծառայություններով ապահովող ճյուղերում, բարձր տեխնոլոգիաների և առաջադեմ արտադրանքի զարգացումը որոշող ճյուղերում մշտապես գերակշիռ դերում:

2. Չինաստանի բոլոր ուսմունքների ընդհանուր նպատակը՝

➤ կարգ ու կանոնի և ներդաշնակության գերակայությամբ իդեալական պետության հայեցակարգի մշակումն է,

➤ իդեալական պետությունը՝ բնակչության գույքային պահանջները բավարարող, տնտեսապես հարուստ պետությունն է,

➤ իդեալական է յուրաքանչյուրի հանդեպ հոգատարությամբ լցված միասնական պետությունը, որտեղ տիրում է յուրաքանչյուրի հանդեպ հոգատարությունը, բոլորն ապրում են որպես մեկ ընտանիքի անդամներ, և բոլոր ապրանքները հասանելի են բոլորին:

3. Եթե Հայաստանի Հանրապետությունում անկախության հռչակումից հետո տնտեսության պետական կառավարման համակարգի բարեփոխումների նպատակն առաջին փուլում հին համակարգի կազմաքանդումն էր, ապա Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում բարեփոխումների նպատակը հանրային հատվածի և պետական կարգավորման առաջատար դերի պայմաններում

բազմակացութեամբ համակարգի ստեղծումն էր՝ առանց կազմաքանդելու պետական կառավարման ավանդական սկզբունքները:

ՉԺՀ տնտեսության զարգացման գործում պետության աճող ազդեցությունը հանգեցրեց երկրի հզոր զարացմանը, դրանով իսկ չինական տնտեսական մոդելն ապացուցեց, որ միայն ազատ ձեռնարկատիրությունը չի կարող դառնալ երկրի տնտեսական հաջողության հիմքը:

4. Չինաստանը հավատարիմ է մնացել իր պատմական պարադիգմային, որտեղ սկզբունքային կարևորություն ունի իրավահաջորդությունը և ազգային սովորույթը:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում թույլ է զարգացած «ազգային դեմք»-ի հասկացությունը, իսկ անցյալի քննադատությունը դարձել է ազգային ավանդույթ: ՀՀ-ն հռչակում ու իրականացնում է անցումայինի գաղափարախոսությունը և դրա համար էլ պետք է խոսել ոչ թե անցման մոդելների տարբերությունների, այլ այն մասին, որ մոտեցումները ՀՀ-ում և ՉԺՀ-ում իրականացվող բարեփոխումներին եղել են սկզբունքորեն տարբեր:

5. Մի շարք առանձնահատկություններ են բնորոշ նաև ՉԺՀ-ի դատական համակարգին, օրինակ, տարատեսակ հատուկ դատարանների առկայությունը (զինվորական տրիբունալներ, երկաթուղային տրանսպորտի դատարաններ, ջրային տրանսպորտի դատարաններ, անտառային դատարաններ): Դրանց թիվը և տեսակների քանակը չի սահմանափակվում օրենքով:

Չինաստանի դատարանների առանձնահատկությունն է դրանց գործունեության ուղղակի կապվածությունը Չինաստանի տնտեսական ոլորտում արդիականացման կուրսի անցկացման հետ: Այդ նպատակով կազմավորվել են նախկինում ՉԺՀ-ում բացակայող Գերագույն ժողովրդական դատարանի տնտեսական գործերով պալատը և նման պալատներ բոլոր աստիճանների ժողովրդական դատարաններում:

6. ՉԺՀ «մշակութային հեղափոխությունից» հետո վերականգնված դատախազության խնդիրները սահմանելիս օրենքն այստեղ նույնպես շեշտը դնում է Չինաստանի արդիականացման անհրաժեշտության վրա: Ընդ որում, խոսվում է նաև ողջ երկրում «քաղաքական նպատակների միակերպ իրականացման» մասին: Վերջին հանգամանքն էլ պայմանավորել է դատախազության մարմինների ենթակայությունը պետական իշխանության տեղական մարմիններին:

7. Չինաստանը, որին հատուկ է քաղաքական կարգի ավտորիտար տեսակը, հետապնդում է վարչական բարեփոխումների այլ նպատակներ. արևմուտքի հետ համեմատած, Չինաստանի համար առաջնահերթ նշանակություն ունի քաղաքական կայունության և կուսակցության հսկողության ապահովումը:

8. Չինաստանի կառավարչական միջավայրն իրենից ներկայացնում է «հիբրիդ»։ Չինաստանին հատուկ է կուսակցական և պետական գերատեսչությունների գործառույթների կրկնօրինակում:

9. Չինաստանի ինստիտուցիոնալ միջավայրն արմատականորեն տարբերվում է արևմտյան համանման ինստիտուցիոնալ միջավայրերից: Չինաստանի մշակութային

միջավայրի էական արժեքային բաղադրիչը կոնֆուցիուսական անցյալն է, ինչը բնորոշվում է պետության լայն ներկայացվածությամբ:

10. Չինաստանը ստեղծել է իր տնտեսության կառավարման հատուկ մոդելը, որը տարբերվում է ինչպես սոցիալիստական, այնպես էլ արևմտյան երկրների ավանդական մոդելներից: Չինական մոդելի հիմնական առանձնահատկություններից են՝

➤ պետական կառավարման համակարգի բարեփոխումները Չինաստանում իրենց բնույթով աստիճանական էին, չխախտեցին տնտեսական և քաղաքական շահերն ու ավանդույթները: Դա այնպիսի մեթոդ է, որն ընդգծում է բարեփոխումների աստիճանականության կարևորությունը, առանց կտրուկ «շարժումների»:

➤ սոցիալական կայունության և կարգի պահպանումը կարևոր արժեքը և ամբողջ պետական կառավարման նպատակն է: Չինաստանի համար առանց սոցիալ-տնտեսական ու քաղաքական կայունության չի կարող լինել արագ քաղաքական զարգացում կամ բնակչության բարձր կենսամակարդակ:

11. Չինական դրական արդյունքներ ապահոված հիմնական գործոններից կարելի է նշել հետևյալները՝

➤ բարեփոխումները Չինաստանում իրականացվել են ոչ թե այլ երկրների բաղադրատոմսերով, այլ հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները, «չինական յուրահատկությամբ սոցիալիզմի կառուցման ուղիով»,

➤ վերափոխումների գլխավոր մեթոդը՝ էվոլյուցիոն, փուլային առաջխաղացումն է դեպի շուկա, այլ ոչ թե համատարած տնտեսական ազատականացում,

➤ Չինաստանը կենտրոնացրել է ուժերը պետական կառավարման համակարգի նոր ստեղծման, այլ ոչ թե անցյալի փլուզման և քննադատության վրա:

12. ՉԺՀ-ի կառավարման ոլորտում դեռևս առկա թերություններից են՝

➤ սոցիալական եկամտների անհավասարությունը,

➤ պետական կառավարման վարչական ծախսերի զգալի մեծությունը և դրանց ոչ համարժեք արդյունավետությունը,

➤ հասարակական կազմակերպությունների երկրորդական դերը:

➤ կառավարման ապակենտրոնացման սկզբունքի ոչ լիարժեք կիրառումը՝ ծառայությունների մատուցման ծայրահեղ ապակենտրոնացված համակարգի պատճառով,

➤ բնակչությանը ծառայությունների մատուցմամբ զբաղվող սպասարկող կազմակերպությունները բնութագրվում են ծայրահեղ հատվածավորված կարգավիճակով և ներկառուցված են պետական մարմինների համակարգում, կամ հանդիսանում են պետության վերահսկողության ներքո ոչ առևտրային կազմակերպություններ, ինչի պատճառով էլ պետական ծառայությունների մատուցման ընթացակարգի լիարժեք փոխանցում մասնավոր կառույցներին տեղի չի ունենում:

13. ՉԺՀ-ում և ՀՀ-ում հանրային կառավարման ցուցանիշների համաթվերի 1996-2016 թվականների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր վեց

բաղադրիչների (իշխանությունների հաշվետվողականություն և բնակչության ձայնի իրավունք, քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, կառավարության արդյունավետություն, կարգավորման որակ, իրավունքի գերակայություն ու կոռուպցիայի վերահսկողություն) գումարային մեծությունը 1996 թվականին երկու երկրներում էլ գտնվել են գրեթե նույն մակարդակի վրա՝ ՉԺՀ-ում՝ 226.5%, ՀՀ-ում՝ 227.6%: Ըստ որում, եթե Չինաստանում 2006թ.-ին 1996թ.-ի համեմատությամբ նկատվել է այդ ցուցանիշի նկատելի անկում (այն հասել է 207.1%-ի), ապա ՀՀ-ում այդ նվազումը եղել է ավելի պակաս (այն հասել է 223.2%-ի): Ընդհանուր առմամբ, Չինաստանում գումարային ցուցանիշի աճը 2016թ.-ին 1996թ.-ի համեմատ կազմել է 14.7 տոկոսային կետ, իսկ Հայաստանում նշված ցուցանիշը, Չինաստանի ցուցանիշի համեմատությամբ, ավելի բարձր է եղել շուրջ երկու անգամ (29.1 տոկոսային կետ): Այսինքն, ՀՀ-ում հանրային կառավարման ցուցանիշների համաթվերը Չինաստանի համեմատությամբ ավելի խորքային և արագ տեմպերով են բարելավվել¹⁸:

14. Պլանային տնտեսությամբ սոցիալիզմի և շուկայականով կապիտալիզմի միջև Չինաստանում հակասություն չկա: Բոլոր տնտեսական գործընթացները գտնվում են պետության (կուսակցության) մշտական հսկողության ներքո, իսկ՝ «սոցիալիզմից և կապիտալիզմից վերցրած ամենալավը՝ երկրի տնտեսությանը» հիմնական կարգախոսն է: Չինաստանում ձևավորվեց «Պետության և Ազգի Մեծության» ազգային գաղափարը: Ժամանակակից Չինաստանում գոյություն ունի ևս երկու կարգախոս.

➤ սեփականությունը, որը օգնում է զարգանալ Չինաստանին՝ սեփականություն է, իսկ այն որը խանգարում է՝ սեփականություն չէ,

➤ այն ամենը, ինչը նպաստում է արտադրողական ուժերի զարգացմանը՝ լավ է, իսկ այն ամենը, ինչը խանգարում է՝ վատ:

Համաձայն Չինական բարեփոխումների հիմնադիր Դեն Սյաոպինի, բարեփոխումների էությունը հանգում է կոշտ քաղաքական իշխանության հետ տնտեսական ազատականության համադրությանը: Կապված այն հոետորական վեճերի հետ, թե կոնկրետ ինչ է կառուցում Չինաստանը՝ կապիտալիզմ, թե սոցիալիզմ, Դեն Սյաոպինն ասել է՝ «Կարևոր չէ թե ինչ գույնի է կատուն, այլ կարևոր է, որ նա լավ բռնի մկներին»:

15. Հիմնական դասերը, որ կարելի է քաղել ՉԺՀ-ի տնտեսության պետական կառավարման փորձից, հետևյալներն են՝

➤ կառավարման ոլորտում երկրի քաղաքական կուրսը, հեռանկարային գործողությունները և յուրաքանչյուր «պետական քայլը» պետք է ունենա «ինքնաբավության» սկզբունքի պարտադիր առկայություն, ինչն էլ հենց կհանդիսանա մեր պետության կայուն զարգացման և կայունության անբաժանելի մասը,

➤ իշխանության կայուն կենսագործունեության ապահովման նպատակով յուրաքանչյուր տարվա սկզբին հատուկ մասնագիտական խմբի կողմից պետք է իրականացվի նախորդ 2 տարիներին պետական կառուցվածքի և գործունեության

¹⁸ Վերլուծությունը կատարվել է <https://data.worldbank.org/data-catalog/worldwide-governance-indicators> կայքի տվյալներով:

բացասական երևույթների, արդյունքների ու դրանք ծնող պատճառների գույքագրում և մեկնաբանում՝ դրանք ապագայում բացառելու համար:

16. Կատարված ուսումնասիրության արդյունքներով, ելնելով Չինաստանի դասերից, ՀՀ տնտեսության պետական կառավարման ոլորտում կիրառելու նպատակով ներկայացվում են հետևյալ առաջարկությունները.

ա) ՀՀ-ում հանրային ծառայության ոլորտի օրենսդրական փոփոխությունները (բարելավումները) պետք է նախատեսեն հանրային ծառայողների համար կազմակերպական բնույթի վարքի կանոնները, որոնցից են՝ կրճատել ծառայողական հանդիպումների, այցերի ծախսերը, բացառել հանդիսությունների ճոխ կազմակերպումը և առանց հատուկ անհրաժեշտության հրապարակային միջոցառումներին հանրային ծառայողների մասնակցությունը, խուսափել այն միջոցառումներից, որտեղ հանրային ծառայողը կարող է լինել ուշադրության կենտրոնում, նվազագույնի հասցնել հանրային ծառայողի՝ բնակավայրով ծառայողական մեքենայով տեղաշարժի դեպքում փակվող ճանապարհների թիվը, յուրաքանչյուր կառույցի համար սահմանել տարվա ընթացքում իրականացվող պատվիրակությունների և դրանց մասնակիցների առավելագույն թիվը,

բ) հավանական հակամարտությունների դաշտում օգտագործել տնտեսական կապերի ստեղծման ցանկացած հնարավորություն, որի ժամանակ քաղաքական խնդիրները մղել ետին պլան՝ առաջնությունը տալով ազգային տնտեսական շահին (շահերին),

գ) Հայաստանի Հանրապետության տնտեսական հնարավորությունները ընդլայնելու համար կարևոր է հանրապետության ռեսուրսային բազայի ավելացումը արտասահմանում՝ ձեռք բերելով արտադրանքի (ծառայությունների) իրացման շուկաների ընդլայնում, ինչպես նաև հատկապես վերամշակման հզորությունների ավելացում,

դ) հանրային ծառայողներին մրցութային եղանակով ընտրության կազմակերպման ոլորտում իրականացվող փոփոխությունները պետք է միտված լինեն քննական առարկաներում հավատարմության, առաքինության, արդարության և համանման չափանիշների ներդրմանը,

ե) ավանդույթ դարձնել հանրային ծառայության ոլորտում ՀՀ պետական իշխանության բոլոր մարմինների կողմից նույն օրը ամենամյա լավագույն ծառայողների ցուցակների բաց հրապարակումը՝ միաժամանակ ստեղծելով նրանց նյութական և հոգևոր խրախուսման համապատասխան հիմնադրամ,

զ) ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարական փաստաթղթերի հիմքում պետք է դրվեն ազգային տնտեսությունը արտաքին ազդեցություններից զերծ պահելու հանգամանքը և այդպիսի հանգամանքների ի հայտ գալու դեպքում կանխարգելման միջոցառումները՝ որպես վերջնական նպատակ դիտարկելով ոչ թե ֆինանսական օլիգարխիայի շահերի պաշտպանությունն ու դրանց սպասարկումը, այլ հանրային շահերի ապահովումը, երկրի իրական հատվածի զարգացումը և բնակչության

կենսամակարդակի բարձրացումը: Կարևոր տեղ պետք է հատկացվի նաև գործարարների և պետության միջև գործընկերային հարաբերությունների զարգացման ճանապարհով հանրության համար կարևորագույն նպատակների իրացումը,

է) իրավական պետության ստեղծման համար առանձնահատուկ կոնկրետ գործողություններով կարևորել հոգևոր պայմանների զարգացումն ու առաջնային տեղում դնել ներդաշնակությունն ընտանիքում, հասարակության մեջ և երկրում՝ յուրաքանչյուր քաղաքացուն ապահովելով կյանքի արժանավայել պայմաններ, և արդար աշխատանքի դեպքում՝ արժանապատիվ ապրելու հնարավորություն,

ը) քաղաքական կյանքի կայունացման և հանրության սոցիալական շահերի ներդաշնակեցման նպատակով անհրաժեշտ է կիրառել տնտեսա-քաղաքական նոր եզրույթ՝ քաղաքական վարկավորումը, որը կարող է ունենալ առևտրային բնույթ, երբ ֆինանսական միջոցները հատկացվում են տոկոս կամ ռենտա վաստակելու նպատակով: Սակայն, այն կարող է վարկավորման միջոց դառնալ, երբ որպես նպատակ չի դրվում ներդրված ռեսուրսի առևտրային աճը, այլ որպես նպատակ սահմանվում է կառավարվող համակարգում զարգացման համամասնությունների խորացումը, և հատկապես, երբ խոսքը վերաբերում է զարգացման գործում սոցիալական ակտիվության բարձրացմանը, որի արդյունքում վարկավորումը մոլորակալիկատորի էֆֆեկտի հաշվին ավելացնում է ոչ այնքան տնտեսական, որքան որ սոցիալ-տնտեսական արդյունավետությունը,

թ) տնտեսության պետական կառավարման բարեփոխումների գործում անպայմանորեն ներառել քաղաքական նպատակները՝ դրանով իսկ ապահովելով հասարակության և նրա ամբողջական ներուժի մասնակցությունը պետական կառավարման համակարգի բարելավմանը: Բարեփոխումների քաղաքական բաղադրիչի անտեսումն և այդ բարեփոխումները բացառապես վարչական միջոցներով և միայն պետական ապարատի ջանքերով իրականացումը կնշանակի կորցնել իրականության ընկալումն ու ի սկզբանե դատապարտված լինել անհաջողության,

ժ) նկատի ունենալով ՀՀ-ում անտառանյութի նկատմամբ զգալի պահանջարկն ու անտառի նկատմամբ բնապահպանների խիստ պահանջները, անհրաժեշտ է վերանայել անտառային տնտեսության պետական կառավարման մոտեցումները՝ առաջնությունը տալով ոչ թե գերազանցապես վարչական, այլ տնտեսական գործիքներին (մասնավորապես՝ անտառային տարածքները և այլ հողերը ընտանեկան կապալով տրամադրելու հնարավորության ստեղծումը, այնուհետև՝ դրանց փոխանցումը մասնավոր անձանց կամ կազմակերպություններին՝ մշակման համար, իսկ հետագայում նաև՝ նրանց կողմից անտառանյութի վաճառքի թույլտվությունը և այլն):

ի) նկատի ունենալով հայկական սփյուռքի մեծաքանակությունն ու նրանց կազմում կրթական, մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող անձանց առկայությունը, խիստ արդիական է համապատասխան մասնագետների ընտրության և հայրենիք վերադարձի գործընթացի կազմակերպումը: Այդ նպատակով անհրաժեշտ

է կազմակերպել թափուր տեղերի տոնավաճառներ՝ արտերկրում, ինչպես նաև նրանց վերադարձն ու աշխատանքի պայմանների ապահովումը ՀՀ-ում:

17. Չինաստանի բարեփոխումների անմիջական նպատակն է ժողովրդավարություն, արդարություն, արդյունավետություն և չինացիների այդքան սիրված՝ ներդաշնակություն: Այդ երկրի հաջողությունները ևս մեկ անգամ ցույց են տալիս, որ ազգի բարօրությունը ձևավորվում և ծնվում է իր ուժերին հավատացած ժողովրդի հոգևոր միասնությունից:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Զալինյան Ա.Ա., Ժամանակակից Չինաստան. կենսագործունեության առանձին սկզբունքներ և խնդիրներ, «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 2, 2016թ., էջ 36-43:

2. Զալինյան Ա.Ա., Տնտեսության պետական կառավարման բարեփոխումների միջազգային փորձի առանձնահատկությունները, «Բանբեր» Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, N 4 (48), 2017թ., էջ 72-83:

3. Զալինյան Ա.Ա., Չինաստանի մշակութային և կառավարչական միջավայրերը տնտեսության պետական կառավարման համատեքստում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 5, 2017թ., էջ 71-80:

4. Զալինյան Ա.Ա., Պետական և համայնքային սեփականության վաճառքի պրակտիկայի առանձնահատկությունները Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N 9-10 (205-206), 2017թ., էջ 133-135:

5. Զալինյան Ա.Ա., Չինաստանի Ժողովրդական Հանրապետության պետական կառավարման նորովի հայացքները համաշխարհային քաղաքականության մեջ, «Այլընտրանք» գիտական հանդես, N 1, հունվար – մարտ, 2018թ., էջ 95-101:

6. Զալինյան Ա.Ա., ՉԺՀ պետական կառավարման սկզբունքները ու ազգային-պետական շահերի ներդաշնակությունը, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, N 1-2 (209-210), 2018թ., էջ 19-22:

АННА АШОТОВНА ЗАЛИНЯН

**ОСОБЕННОСТИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ
ЭКОНОМИКОЙ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И
КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКИ)**

Автореферат диссертации на соискание учёной степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 15 июня 2018 года в 15⁰⁰ на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

Р Е З Ю М Е

В современной мировой экономике и политике очевидна растущая роль КНР, интерес к которой определяется в первую очередь с точки зрения изучения уникальной социально-экономической, политической системы страны и практики государственного управления экономикой. Обязательное наличие принципа самодостаточности при осуществлении каждого "государственного шага" и корректировка социально-экономического и политического курса на достижение долгосрочных результатов являются неотъемлемой частью развития и устойчивости КНР. Актуальность темы диссертации обусловлена изучением возможности включения новых элементов государственного управления западной институциональной системы в систему государственного управления экономикой в КНР. Кроме того, актуальность темы обусловлена необходимостью изучения изменений в системе государственного управления экономикой Республики Армения и особенностей, присущих постсоветским странам в процессе интеграции в глобальную экономику.

Целью диссертационной работы является исследование экономических и политических систем РА и КНР, исследование и характеристика систем государственного управления экономиками стран, в том числе – этапов формирования, структуры и функционирования органов государственной власти, а также разработка предложений по модернизации системы государственного управления в РА.

Для достижения поставленной в диссертационной работе цели выделены следующие задачи:

- исследовать этимологию и форму выражения понятий "демократия" и "народное управление" в КНР;
- проанализировать культуру и практику государственного управления Китая и выявить их особенности;

- изучить современные подходы к государственному управлению в Китае и их гармонизацию с национальными интересами страны;
- изучить проблемы и особенности разделения ветвей власти в Китайской Народной Республике и Республике Армения;
- проанализировать основные этапы институционального развития и реформирования систем государственного управления КНР и РА;
- изучить системы государственного управления экономикой в КНР и РА и выявить особенности управления;
- выявить и представить особенности в системах государственной службы в КНР и гражданской службы в РА;
- рассмотреть конституционные принципы и особенности государственного управления экономикой в КНР и РА;
- исследовать парадигмы экономического развития КНР и РА;
- проанализировать основные положения принятых и реализуемых в КНР и РА стратегических программ и концепций социально-экономического развития, изучить приоритеты и цели, поставленные в них;
- провести сравнительный анализ программ и концепций социально-экономического развития, реализуемых в КНР и РА.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

1. Выявлены и представлены ряд ключевых принципов государственного управления китайской экономикой, которые применимы как в системе управления экономикой Армении, так и других стран.

2. Исследована и проанализирована роль и особенности культурной и институциональной среды экономик двух стран, а также формирование и развитие систем их государственного управления, проведён их сравнительный анализ.

3. Определены и изложены основные особенности китайской модели государственного управления экономикой, отличающие её от моделей управления западных стран.

4. Выявлены сильные и слабые стороны практики государственного управления экономикой в КНР и РА, недостатки и упущения в области управления и разработаны новые подходы к совершенствованию государственного управления экономикой в РА.

5. На основе комплексного исследования и системного анализа государственной системы управления экономикой КНР и РА предложен новый метод и подход к изучению системы государственного управления.

ANNA ASHOT ZALINYAN

**PECULIARITIES OF PUBLIC ADMINISTRATION OF THE ECONOMY
(ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE
PEOPLE'S REPUBLIC OF CHINA)**

The abstract of the dissertation for the pursuing of scientific degree of PhD in Economics in the field 08.00.02 “Economics and Management of Economy and its Spheres”

The defense of the dissertation will take place at 15⁰⁰ on 15-th June 2018 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

S U M M A R Y

In the modern world economy and politics, the growing role of the People's Republic of China (PRC) is evident, the interest in which is determined primarily from the point of view of studying the unique socio-economic, political system of the country and the practice of state management of the economy. The mandatory presence of the principle of self-sufficiency in the implementation of each "state goal" and the adjustment of the socio-economic and political course for achieving long-term results are an integral part of the development and stability of the PRC. The relevance of the topic of the dissertation is due to the study of the possibility of including new elements of public administration of the Western institutional system in the system of state management of the economy in China. In addition, the relevance of the topic is conditioned by the need to study changes in the system of state administration of the economy of the Republic of Armenia and the peculiarities of Post-Soviet countries in the process of integration into the global economy.

The main objective of the thesis is to study the economic and political systems of the RA and PRC, to study and characterize the systems of state management of the economies of the countries, including the stages of formation, structure and functioning of public authorities, and the development of proposals for the modernization of the public administration in Armenia.

To achieve the goal set in the thesis, the following tasks are identified:

- Explore the etymology and form of expression of the concepts of "democracy" and "people's governance" in the PRC;
- Analyze the culture and practice of public administration in China and identify their characteristics;

- Explore modern approaches to public administration in China and their harmonization with the national interests of the country;
- Study the problems and peculiarities of the division of branches of power in the People's Republic of China and the Republic of Armenia;
- Analyze the main stages of institutional development and reform of the public administration systems of the PRC and RA;
- Examine the systems of public administration of the economy in China and the RA and identify management features;
- To identify and present peculiarities in civil service systems in the PRC and civil service in RA;
- Consider the constitutional principles and features of state management of the economy in China and the Republic of Armenia;
- Explore the paradigms of economic development of the PRC and RA;
- Analyze the main provisions of the strategic programs and concepts of social and economic development adopted and implemented in the PRC and RA, study the priorities and goals set in them;
- Conduct a comparative analysis of programs and concepts of social and economic development implemented in the PRC and RA.

The main scientific results of the research have theoretical and practical importance, the scientific novelty of which consists in the following:

1. A number of key principles of state management of the Chinese economy have been identified and presented, which are applicable both in the Armenian economic management system and in other countries.

2. The role and peculiarities of the cultural and institutional environment of the economies of the two countries, as well as the formation and development of their public administration systems, were analyzed and analyzed, and their comparative analysis was carried out.

3. Identified and outlined the main features of the Chinese model of state management of the economy, distinguishing it from the management models of Western countries.

4. Strengths and weaknesses of the practice of state management of the economy in the PRC and RA have been revealed, shortcomings and omissions in the field of management, and new approaches have been developed to improve the state management of the economy in the Republic of Armenia.

5. Based on a comprehensive study and system analysis of the state system of economic management of the PRC and the Republic of Armenia, a new method and approach to the study of public administration was proposed.